# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| 1. | Անունը, ազգանունը | Արմեն Հարությունյան |
| 2. | Զբաղեցրած պաշտոնը | ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ |
| 3. | Գործուղման վայրը և ժամկետը | Իտալիայի Հանրապետություն (Հռոմ), 2017 թվականի հուլիսի 2-5-ը |
| 4. | Հրավիրող կողմը | ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՊԳԿ) |
| 5. | Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը | Մասնակցություն ՊԳԿ-ի համաժողովի 40-րդ նիստին |
| 6. | Քննարկված թեմաները | Նիստի ընթացքում ներկայացվել են ՊԳԿ-ի տարածաշրջանային համաժողովների նիստերի հաշվետվությունները, գյուղատնտեսության, անտառաբուծության, ձկնաբուծության վերաբերյալ կայացած նիստերի արդյունքները, համաշխարհային պարենային ապահովության հարցերով կոմիտեի զեկույցը, ինչպես նաև քննարկվել են կլիմայի փոփոխությանը, գյուղատնտեսությանը և պարենային ապահովությանը վերաբերող հարցեր, 2018-2021 թվականների ՊԳԿ-ի միջոցառումների ծրագիրը և 2018-2019 թվականների բյուջեն: |
| 7. | Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը | Կայացել է հանդիպում ՊԳԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ներկայացուցիչ, ՊԳԿ-ի գլխավոր տնօրենի օգնական Վլադիմիր Ռախմանինի հետ: Քննարկվել են ՊԳԿ-ի կողմից իրականացվող ծրագրերը, Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից ցուցաբերվող աջակցության հնարավորությունները, Հայաստանում ՊԳԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի ընթացքը, ինչպես նաև ՊԳԿ-ի և Հայաստանի միջև համագործակցության հեռանկարները:<br>Կայացել է հանդիպում Բելառուսի Հանրապետության գյուղատնտեսության և պարենի նախարարի տեղակալ Ալլա Լոմակինայի հետ: Քննարկվել են ԵԱՏՄ անդամակցության շրջանակներում գյուղատնտեսության բնագավառում հայ-բելառուսական համագործակցության հեռանկարները:<br>Նիստի ընթացքում ներկայացրել եմ զեկույց՝ ՀՀ- |

| | | |
|---|---|---|
| | | ում գյուղատնտեսության և պարենային անվտանգության իրավիճակի վերաբերյալ: |
| 8. | Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը | Ընդունվել են 2018-2021 թվականների ՊԳԿ-ի միջոցառումների ծրագիրը և 2018-2019 թվականների ՊԳԿ-ի բյուջեն: |
| 9. | Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները | |
| 10. | Գործուղվողները | ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Արմեն Հարությունյան |
| 11. | Ստորագրությունը, ամսաթիվը | 14.07.2017թ. |